

Աստուած աւելցնէ անձին վեհութիւնը մեծ՝ պատուարժան՝ գով-
եալ՝ յարդի՝ քաջասիրտ թագաւորին եւ ասպետին փառաց . առիճն
Յովհաննէս, պաշտպան՝ քրիստոնէութեան, պարծանք՝ Յիսուսի հետե-
ւողաց, պսակ՝ Քրիստոսի օրինաց, պաշտպան՝ թշնամեաց որդիներուն,
հաստատող՝ խաչապաշտից, ստեղծիչ՝ ասպետաց, փայլ՝ ազնուատոհմից
եւ թագակրաց, բարեկամ՝ թագաւորաց եւ կայսերաց, տէր՝ կասախյ-
այի եւ այլ յարակից իշխանութեանց ու քաղաքաց զորս կը կառա-
վարէ, եւ տանուտիրութեանց՝ որոնցմէ հարկ կստանայ . Աստուած
անոր վրայէն չվերցնէ իր սէրը, եւ աւելցնէ անոր ազնուականութիւնը,
ինչ որ մեր համեստ շնորհափայլութիւնը կը փափագի, որուն մէջ անի-
կայ զէպի իր նպատակն յառաջացած՝ զօրաւիզ եւ ընդունելութիւն
գտած է . եւ իր պատուիրակները, հրամաններն ու նուէրները՝ սէրէ
յառաջ եկած երախտագիրտութեան արժանի գատուեցան . եւ մեր ըն-
դունելութիւնը տեղի ունեցաւ իր խնդրանքին հնազանդելու համար :
Եւ պարտինք յայտնել Ձեր երանեալ իմաստութեան, թէ Ձեր նամակ-
ները մեզ հասան՝ ձեռամբ Ձեր ազնիւ ծառաներուն ու Ձեր յարգելի
սուրճանդակներուն (զորս Աստուած բարձրացնէ) : Մեզ կը պատուէք
այդ նամակներով, որոնցմէ կիմանանք Ձեր սէրը, բարեկամութիւնն
ու բարեհաճութիւնը, նոյնպէս եւ Ձեր պատուիրակներուն զրկուելուն
պատճառը՝ Հայոց թագաւորին, թագուհիին, իրենց մարդիկներուն ու
ծառաներուն խնդրին համար, եւ իր կոչումը մեր առաքինական շնոր-
հին : Եւ Ձեր անձնական փափագը կատարելու համար, — որով կը
խնդրէք Հայոց թագաւորին, թագուհիին, իրենց զաւակներուն ու ծա-
ռաներուն ազատութիւնը, — մենք՝ Ձեր փափագն իմացած ժամուն
իսկ՝ սիրով կը հաւանինք Ձեր անձնական խնդրանքին, եւ ինչպէս որ
կերեւի, մեր հրամանները գործադրուեցան Ձեզ ազաւելու համար Ձեր
մտամուքներէն ու հոգերէն . ինչու որ հրամայեցինք ազատ արձակել՝
Ձեր անձնական փափագը կատարելու համար : Եւ կը փափագինք որ
այս բանն իմանաք եւ չարունակէք Ձեր սկսած սէրը, բարեկամու-
թիւնն ու մարդասիրութիւնը, եւ թէ իմացնէք մեզ Ձեր հարրս-
տութեան, Ձեր գոհարեղէններուն եւ Ձեր ընծաներուն բազմանալուն
լուրը :

Արդ՝ այս բոլորը գիտնաք : Եւ Աստուած տայ Ձեզ լուսագոյն
կեանք մը՝ Ձեր արժանիքին ու շնորհքին համար : Ամենակարողն եւ
բարձրեալն Աստուած թող այսպէս կամենայ :